Ես ունեմ իրավունքներ, դու ունես իրավունքներ, նա ունի իրավունքներ...

Նախաբան՝ երեխաների իրավունքների վերաբերյալ

Յուրաքանչյուր ոք ունի իրավունքներ: Ավելին, որպես 18 տարին չլրացած տղա կամ աղջիկ՝ դուք ունեք որոշակի հատուկ իրավունքներ: Այդ իրավունքների ցանկը զետեղված է 1989 թվականին Միավորված ազգերի կազմակերպության ընդունած՝ Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայում. կոնվենցիայում ամրագրված են նաև այն քայլերը, որ պետք է ձեռնարկեն կառավարությունները այդ իրավունքների իրականացման մեջ ձեզ օգնելու նպատակով:

COUNCIL OF EUROPE CONSEIL DE L'EUROPE

Ձեր գոյատևումը, ձեր պաշտպանությունը և ձեր զարգացումը

- Դուք ունեք ձեզ հետ առնչվող բոլոր որոշումների ժամանակ ձեր շահերի պաշտպանության իրավունք, ինչպես նաև՝ ձեր ծագման, համոզմունքների, կրոնական դավանանքի կամ սեռի պատճառով խտրականության չենթարկվելու իրավունք:
- Դուք ունեք կյանքի և ներդաշնակ ու առողջ ֆիզիկական, մտավոր, հոգևոր, բարոյական և սոցիալական զարգացման իրավունք:
- Դուք ունեք հիմնական կարիքների ապահովման իրավունք, ինչպիսիք են սնունդը, հագուստը, կացարանը և բժշկական խնամքը:
- Դուք ունեք շահագործման բոլոր տեսակներից, դաժան վերաբերմունքից և ֆիզիկական ու հոգեբանական բռնությունից պաշտպանության իրավունք, ներառյալ ընտանիքում կամ երեխաների խնամքի հաստատություններում տեղի ունեցող դեպքերում:
- Դուք ունեք բարձր մակարդակի կրթություն ստանալու իրավունք, ինչը կապահովի ձեր անհատականության, շնորհքի և ընդունակությունների հնարավոր ամենալիակատար զարգացումը: Ձեր կրթությունը պետք է սովորեցնի ձեզ հարգել ուրիշների իրավունքներն ու ազատությունները և նախապատրաստի ձեզ ազատ հասարակության մեջ պատասխանատու կյանքի՝ բոլոր մարդկանց միջև փոխըմբռնման, խաղաղության, հանդուրժողականության, հավասարության և բարեկամության ոգով:
- Դուք ունեք լայնասահման օբյեկտիվ տեղեկատվություն ստանալու իրավունք:
- Եթե դուք մտավոր կամ ֆիզիկական առումներով ոչ լիարժեք երեխա եք, ապա ձեզ վերապահվում է արժանապատիվ կյանք վարելու իրավունք, այնպես, որպեսզի դուք կարողանաք ինտեգրվել հասարակության մեջ, զարգացնել ձեր անհատականությունը և վայելել առավելագույն ինքնուրույնություն:
- Դ• Դուք ունեք հանգստի, ժամանցի, խաղի և զվարճանքի, արվեստով և մշակույթով զբաղվելու իրավունք ձեր տարիքին համապատասխան համարժեք միջավայրում:

Ձեր ինքնությունը, ձեր անձնական կյանքը և ձեր ընտանիքը

- Դուք ունեք անվան, քաղաքացիության և ձեր ինքնության պաշտպանվածության իրավունք: Եթե դուք պատկանում եք որևէ էթնիկ, կրոնական կամ լեզվական փոքրամասնության՝ չպետք է զրկված լինեք ձեր սեփական մշակութային կյանքը վարելու, ձեր կրոնը դավանելու և ձեր լեզուն օգտագործելու իրավունքից:
- Դուք ունեք ձեր մասնավոր կյանքի պաշտպանության իրավունք: Ոչ ոք չի կարող ձեր կամ ձեր ընտանիքի անձնական կյանքին հակաօրինական միջամտություն ցուցաբերել: Ձեր տունը, ձեր նամակագրությունը, ձեր պատիվն ու համբավը պաշտպանված են օրենքով:
- Ձեր ծնողները համատեղ պատասխանատվություն են կրում ձեր դաստիարակության և զարգացման համար: Նրանք իրավունք և պարտականություն ունեն ձեզ ուղղորդել այնպես, որպեսզի դուք կարողանաք օգտվել ձեր իրավունքներից և հարգել ձեր պարտականությունները:
- Դուք իրավունք ունեք իմանալու, թե ովքեր են ձեր ծնողները և դաստիարակվել նրանց կողմից, բացառությամբ այն դեպքերի, երբ դա հակասում է ձեր շահերին:
- Դուք իրավունք ունեք իմանալու՝ որտեղ են ձեր ծնողները և մեկնել այլ երկիր նրանց միանալու համար: Ձեր ծնողները նույնպիսի իրավունք ունեն ձեր նկատմամբ:
- Ձեր ծնողներից բաժանված լինելու դեպքում դուք իրավունք ունեք նրանց հետ ձեր հարաբերություններին առնչվող բոլոր որոշումների կայացման ժամանակ ստանալ խորհրդատվություն: Եթե դուք բաժանված եք ձեր ծնողներից, կամ նրանցից մեկից, դուք իրավունք ունեք կանոնավոր կերպով հանդիպել նրանց, բացառությամբ այն դեպքերի, երբ դա հակասում է ձեր շահերին:
- Որդեգրում կարող է թույլատրվել միայն այն դեպքում, եթե դա բխում է ձեր շահերից:

Ձեր ազատությունները

- Կարծիքի ազատություն. այն պահից սկսած, երբ դուք ունակ եք դրան, դուք իրավունք ունեք արտահայտել ձեր կարծիքը ձեզ վերաբերող ամեն ինչի մասին: Ձեր կարծիքը պետք է անպայման հաշվի առնվի:
- Արտահայտվելու ազատություն. դուք ունեք ազատ արտահայտվելու և տեղեկատվություն որոնելու, ստանալու և հաղորդելու իրավունք:
- Մտքի, խղճի և կրոնի ազատություն:
- Միավորումների ազատություն. դուք ունեք այլ անձանց հետ միավորումների մեջ մտնելու և հավաքների մասնակցելու իրավունք:

Այս ազատությունները կարող են ենթարկվել որոշ սահմանափակումների: Դուք պարտավոր եք հարգել այլ անձանց իրավունքներն ու ազատությունները և չպետք է վտանգ ներկայացնեք հասարակության կամ ինքներդ ձեզ համար:

Դուք և պետությունը

- Պետությունը ձեռնարկում է բոլոր անհրաժեշտ միջոցները, որպեսզի դուք կարողանաք օգտվել ձեզ համար սահմանված իրավունքներից և ազատություններից:
- Պետությունը պետք է պաշտպանի ձեզ և ապահովի ձեր բարեկեցությունը: Այն պետք է օգնի ձեր ծնողներին կամ այն անձանց, ովքեր հոգ են տանում ձեզ համար՝ ստեղծելով հաստատություններ և տրամադրելով ծառայություններ՝ ձեր շահերն ու բարեկեցությունը պաշտպանելու համար:
- Եթե դուք չեք կարող ապրել ձեր ընտանիքի հետ՝ պետությունը պետք է պաշտպանի և օժանդակի ձեզ: Այն պետք է այնպիսի մի լուծում գտնի, որը հաշվի կառնի ձեր անցյալը և ձեր մշակույթը, և դուք պետք է ունենաք ժամանակ առ ժամանակ ձեր իրավիճակի վերանայման իրավունք:
- Պետությունը պետք է միջոցներ ձեռնարկի՝ ձեզ թմրանյութերի ապօրինի օգտագործման վտանգից պաշտպանելու համար:
- Եթե դուք ենթարկվել եք բռնության, պետությունը պետք է օգնի ձեզ և աջակցի վերադառնալ բնականոն կյանքի:
- Դուք ունեք արդար վերաբերմունքի իրավունք: Պետությունը պետք է ապահովի, որպեսզի արդարադատության համակարգը համապատասխանեցված լինի ձեր առանձնահատուկ իրավունքներին ու կարիքներին:
- Դուք չպետք է ենթարկվեք խոշտանգումների կամ դաժան կամ արժանապատվությունը նվաստացնող պատժի:
- Դուք չեք կարող ենթարկվել մահապատժի կամ ցմահ բանտարկության:
- Դուք չեք կարող ենթարկվել անօրինական ձերբակալության: Կալանքը պետք է գործադրվի միայն որպես վերջին հնարավոր միջոց: Այն պետք է լինի որքան հնարավոր է կարճ ժամկետով և հաշվի առնի ձեր կարիքներն ու տարիքը: Կալանավայրում դուք պետք է առանձնացված լինեք չափահաս կալանավորներից կամ բանտարկյալներից, և դուք պետք է իրավունք ունենաք կապ պահպանել ձեր ընտանիքի հետ եթե միայն բացառիկ հանգամանքներում հակառակը չի բխում ձեր սեփական շահերից:
- Զինված հակամարտությունների ժամանակ պետությունը պետք է պաշտպանի և հոգ տանի ձեր մասին: Եթե ձեր 15 տարին չի լրացել, դուք չեք կարող կանչվել ծառայության որևէ զինված ուժերի կազմում:

Միջազգային կոնվենցիաները պետությունների միջև կնքված պայմանագրեր են: Այս պայմանագրերը սահմանում են կանոններ, որոնց ենթարկվելը պարտադիր է, բայց նրանք նաև խրախուսում են պետություններին ձեռնարկել քայլեր, որոնք էլ ավելի բարենպաստ կլինեն երեխաների համար: Եթե ձեր երկրի օրենքն ավելի բարենպաստ է ձեր նկատմամբ, քան կոնվենցիան, պետք է կիրառվի ներպետական օրենսդրությունը:

Միջազգային կազմակերպությունները և դուք

Պետությունները հիմնել են բազմաթիվ միջազգային կազմակերպություններ: Նրանցից մի քանիսը, ինչպես օրինակ Միավորված ազգերի կազմակերպությունը և Եվրոպայի խորհուրդը, կոչված են պաշտպանելու մարդու իրավունքները, կանխելու հակամարտությունները և կառուցելու ավելի արդար, բարեկեցիկ և ժողովրդավարական հասարակություն: Գրեթե բոլոր միջազգային կոնվենցիաները կյանքի են կոչվել այս կազմակերպությունների միջոցով, որոնք այնուհետև քայլեր են ձեռնարկել ապահովելու, որ պետությունները հարգեն այդ փաստաթղթերում ամրագրված իրավունքները:

Երեխայի իրավունքների կոմիտեն մոնիտորինգի է ենթարկում Միավորված ազգերի կազմակերպության կողմից ընդունված՝ Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի կենսագործումը կյանքում: Դուք կարող եք ծանոթանալ կոմիտեի՝ ձեր երկրին առնչվող հանձնարարականներին:

Երեխաները կարող են նաև հայց ներկայացնել Մարդու իրավունքների եվրոպական դատարան: Օրինակ՝ դատարանը մի երկրի մեղավոր է ճանաչել երեխաներին բանտում, դպրոցում և տանը մարմնական պատժից չպաշտպանելու համար: Դատարանը գտել է, որ մի այլ երկիր պատշաճ կերպով հոգ չի տարել մի աղջկա նկատմամբ, ով ճանապարհորդում էր միայնակ:

Ի՞նչ անել, եթե այդ իրավունքները խախտվում են

Որոշակի իրավունքների իրականացումը կարող է սահմանափակվել ծանրակշիռ պատճառներից ելնելով, օրինակ՝ էական վտանգից ձեզ պաշտպանելու համար, կամ հաշվի առնելով ձեր լիակատար զարգացումը կամ տարիքը: Որոշ իրավունքներ, ինչպես օրինակ՝ կյանքի, կրթության, առողջության իրավունքը և բռնությունից կամ շահագործումից ձեզ պաշտպանելու իրավունքը, երբեք չեն կարող ենթարկվել սահմանափակումների՝ անգամ ծնողների կամ ուսուցիչների կողմից: Եթե դուք կարծում եք, որ ձեր իրավունքները ոտնահարվել են, դուք կարող եք.

- խոսել վստահելի մարդկանց, օրինակ՝ ձեր ծնողների, ուսուցիչների, բժիշկների, ընկերների, սոցիալական աշխատողների և ձեզ խնամողների հետ,
- զանգահարել բռնության զոհ դարձած երեխայի իրավունքը պաշտպանող մարմնի հատուկ հեռախոսահամարով, որտեղ ձեզ հետ խոսող անձը կարող է գործնական խորհուրդներ տալ ձեզ,
- դիմել ոստիկանություն, բողոք ներկայացնել և պաշտպանություն խնդրել պետությունից,
- կապվել երեխաների օմբուդսմենի կամ երեխաների իրավունքները պաշտպանող կամավորական միությունների հետ,
- կամ որոշակի դեպքերում դուք կարող եք անգամ ձեր գործի առնչությամբ հայց ներկայացնել Մարդու իրավունքների եվրոպական դատարան:

Ի՞նչ անել եթե այդ իրավունքները խախտվում են:

Եվրոպայի խորհուրդ

Եվրոպայի խորհուրդը 1949 թվականին հիմնադրված միջազգային կազմակերպություն է, որին այսօր անդամագրվել են 47 պետություններ: Նրա խնդիրն է աջակցել մարդու իրավունքների, ժողովրդավարության և իրավունքի գերակայության գործընթացներին: Այն սահմանում է ընդհանուր ժողովրդավարական սկզբունքներ, որոնք հիմնված են անձի պաշտպանությանն ուղղված՝ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի և այլ կոնվենցիաների ու հանձնարարականների վրա, որոնցում անկասկած ներառված են նաև Եվրոպայում բնակվող 150 միլիոն երեխաները:

"Կառուցենք Եվրոպա երեխաների համար և երեխաների հետ" ծրագիրը հոգ է տանում երեխաների իրավունքներին աջակցելու և բռնություններից նրանց պաշտպանելու մասին: Այս ծրագիրն իրականացնող խումբը զբաղվում է այնպիսի խնդիրներով, ինչպես՝ բռնությունը տանը և դպրոցում, մարդու իրավունքները կրթության ոլորտում, երեխաները և ինտերնետը, երեխաները և արդարադատության համակարգը: Մեր կոնվենցիաների, հանդիպումների և հրատարակությունների վերաբերյալ հավելյալ տեղեկատվություն ստանալու համար դուք կարող եք այցելել մեր կայքը և մեր "Wild Web Woods" օնլայն տարբերակով խաղը:

"Building a Europe
for and with Children"
Council of Europe
F - 67075 Strasbourg Cedex
www.coe.int/children
children@coe.int

Այս փաստաթուղթը ստեղծվել է Ֆինլանդիայի կառավարության բարձր հովանու ներքո:

ԿԱՌՈՒՑԵԼ ԵՎՐՈՊԱ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԵՎ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԵՏ